



ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

Ուրբաթ, 1 Օգոստոս.– Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 2 Օգոստոս.– Սրբոցն՝ Թադէոսի Առաքելոյն մերոյ եւ Սանդիստոյ կուսին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Սուրէն Քհնյ. Ղազարեան:

Կիրակի, 3 Օգոստոս.– Բ. Կիրակի զկնի Վարդավառի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աջակողմեան դասին մէջ գտնուող Ս. Կարապետի Խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Վանիկ Ծ. Վրդ. Մանկասարեան:

Շաբաթ, 9 Օգոստոս.– Սրբոց՝ Որդուց եւ Թռուռնց Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ՝ Արիստակիսի, Վրթանիսի, Յուսկանն, Գրիգորիսի եւ Դանիէլի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Յովհաննիսեան:

Կիրակի, 10 Օգոստոս.– Գ. Կիրակի զկնի Վարդավառի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեան: Ժամարարն էր Տ. Վազգէն Վրդ. Ալէքեան:

Շաբաթ, 16 Օգոստոս.– Սրբոցն՝ Գրիգորի Աստուածաբանին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Սիոն Աբղ. Թաքուշեան:

Կիրակի, 17 Օգոստոս.– Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Զախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնի խորանին վրայ: Պատարագեց Տ. Աղան Վրդ. Գոզեան:

Յետ Ս. Պատարագի ձեռամբ Պատրիարք Սրբազան Հօր կատարուեցաւ «Խաղողօրհնէք»-ի արարողութիւն, ապա օրհնուած խաղողը բաժնուեցաւ հաւատացեալներուն:

Երկուշաբթի, 18 Օգոստոս.– Սկիզբ Աստուածամօր Վերափոխման տօնը կանխող 14-օրեայ Ս. Պատարագներու:

Կիրակի, 24 Օգոստոս.– Դ. Կիրակի զկնի Վարդավառի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեան: Ժամարարն էր Տ. Արտէն Քհնյ. Աբրահամեան:

Ուրբաթ, 29 Օգոստոս.– Նախատօնակին Ս. Յակոբեանց Մայր Տաճարի՝ Ս. Էջմիածին Եկեղեցւոյ մէջ նախագահեց Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 30 Օգոստոս.– Տօն Շողակաթի Ս. Էջմիածնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր տաճարի ձախակողմը գտնուող Ս. Էջմիածին Եկեղեցւոյ մէջ: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան:

Կէսօրէ ետք Կորիւն Եպս. Բաղդասարեան Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբան Հայրեր ինքնաշարժներով մեկնեցան Գեթսեմանի պարտէզ եւ «Հրաշափառ»-ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ տաճար, ուր պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու Վերափոխման նախատօնակը:

Գիշերասկզբին, նոյն վայրին մէջ պաշտուեցան Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները: Հանդիսապետն էր Տ. Կորիւն Ծ. Վրդ. Բաղդասարեան:

Կիրակի, 31 Օգոստոս.– Վերափոխումն Ս. Աստուածածնի: Առաւօտուն Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեան Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբան Հայրեր ինքնաշարժներով մեկնեցան Գեթսեմանի պարտէզ եւ «Հրաշափառ»-ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ տաճար: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ մատուցեց եւ քարոզեց, ապա «Անդաստան»ի արարողութեան նախագահեց Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեան:

Երկուշաբթի, 1 Սեպտեմբեր.– Բ. օր Վերափոխման: Յիշատակ Մեռելոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Խաղ Ծ. Վրդ. Զոննտուրեան: Յաւարտ Ս. Պատարագի կատարուեցաւ Հոգեհանգստեան կարգ: Հանդիսա-

պետն էր Պատրիարք Սրբազան Հայրը:

Շաբաթ, 6 Սեպտեմբեր.– Է. օր Վերափոխման: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Զախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնի խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Գէորգ Վրդ. Հայրապետեան:

Կիրակի, 7 Սեպտեմբեր.– Ը. օր Վերափոխման: Տեսչական Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան տաճարի վերնատան Երաշխաւոր Ս. Աստուածածնի մատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան: Ս. Պատարագը մատուցեց եւ քարոզեց Ս. Յարութեան տաճարի առժամեայ տեսուչ՝ Տ. Տիրան Վրդ. Յակոբեան:

Երկուշաբթի, 8 Սեպտեմբեր.– Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Երեքշաբթի, 9 Սեպտեմբեր.– Սրբոցն Յովակիմայ եւ Աննայի, ծնողացն Ս. Աստուածածնի եւ կանանցն իւղաբերից: Ըստ սովորութեան, Ս. Պատարագ մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ տաճարին մէջ՝ Հայր Յովսէփի գերեզմանին վրայ: Հանդիսապետն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան: Պատարագեց տաճարի տեսուչ՝ Տ. Արտակ Արդ. Տիւնէնեան:

Շաբաթ, 13 Սեպտեմբեր.– Սրբոց Առաքելոցն՝ Թովմայի, Յակոբայ եւ Շմաւոնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Ներսէս Վրդ. Ալոյեան:

Նոյն օրը երեկոյեան, նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Կիրակի, 14 Սեպտեմբեր.– Գիւտ Գօտույ Ս. Աստուածածնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ: Պատարագեց Տ. Արշակ Արդ. Ղազարեան: Յաւարտ Ս. Պատարագի հանդիսապետութեամբ Թէոդորոս Եպս. Զաքարեանի՝ կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն նախորդ օրը տաճարի մաքրութեան մասնակցող բարեպաշտ տիկիներու եւ օրիորդներու հանգուցեալ պարագայից հոգիներուն համար: Արարողութեան աւարտին հոգեսուրճ տրուեցաւ տեսչարանին մէջ:

Շաբաթ, 20 Սեպտեմբեր.– Նիկիոյ Ս. Ժողովոյն երեք հայրիւր ութ եւ տասն հայրապետացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Սերովբէ Արդ. Անտոնեան:

Նոյն օրը երեկոյեան, նախատօնակին ի Ս.

Յակոբ նախագահեց Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Կիրակի, 21 Սեպտեմբեր.– Ծնունդ Ս. Աստուածածնի ի յԱննայէ: Առաւօտուն Տ. Վիգէն Արք. Այքազեան Ս. Հօր գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժերով մեկնեցան Գեթսեմանի պարտէզ եւ «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցեց եւ քարոզեց Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան:

Յաւարտ Ս. Պատարագի, կատարուեցաւ «Հանրապետական մաղթանք» Հայաստանի Հանրապետութեան Անկախութեան 34-ամեակին առիթով:

Շաբաթ, 27 Սեպտեմբեր.– Տօն եկեղեցւոյ ի նաւակատիւ Ս. Խաչին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Վազգէն Վրդ. Ալէքեան:

Խաչվերացի մեծահանդէս նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Սրբազան Հայրը, որ ապա Խաչափայտի Ս. Մասունքը թափօրով Ս. Գլխադիրէն փոխադրեց Աւագ խորան:

Գիշերասկզբին Մայր Տաճարին մէջ պաշտօնած «Եկեցէի» եւ «Հսկման» արարողութեանց նախագահեց Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեան:

Կիրակի, 28 Սեպտեմբեր.– Տօն Վերացման Սրբոյ Խաչին: Առաւօտեան Մայր տաճարին մէջ պաշտուեցան Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւններ: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր տաճարի Աւագ խորանին վրայ մատուցեց եւ քարոզեց Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեան:

Կէսօրէ ետք, նախագահութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր, Մայր տաճարին մէջ կատարուեցաւ Խաչվերացի մեծահանդէս «Անդաստան»:

Երկուշաբթի, 29 Սեպտեմբեր.– Յիշատակ Մեռելոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Սուրէն Քհնյ. Ղազարեան:

Յաւարտ Ս. Պատարագի, հանդիսապետութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր, կատարուեցաւ Հոգեհանգստեան Պաշտօն Մեքրոնեան ընտանիքի ննջեցեալներու հոգիներու հանգստութեան համար:

Շաբաթ, 4 Հոկտեմբեր.– Տօն Խաչի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Ս. Նշան վերնամատրան մէջ: Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ.

Յովհաննիսեան:

Կիրակի, 5 Հոկտեմբեր.- Բ. Կիրակի զկնի խաչի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Յարութիւն՝ մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան: Ժամարարն էր Տ. Գէորգ Վրդ. Հայրապետեան:

Ուրբաթ, 10 Հոկտեմբեր.- Ս. Գէորգայ նախատօնակը պաշտուեցաւ Ղպտոց Ս. Գէորգ եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան:

Շաբաթ, 11 Հոկտեմբեր.- Սրբոցն՝ Գէորգայ Զօրավարին, Աղոկտոսի եւ Ռոմանոսի երգեցողին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ղպտոց Ս. Գէորգ եկեղեցւոյ մէջ: Պատարագեց եւ քարոզեց Տ. Խաղ. Ծ. Վրդ. Զոնետուրեան: Հանդիսապետն էր Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան: Արարողութեան աւարտին, Միաբանութիւնը հիւրասիրուեցաւ Ղպտոց վանքի տեսչին:

Կէսօրէ ետք, Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան Սրբազան Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան տաճար, ուր ժամերգութիւնն ու նախատօնակը պաշտուեցան մեր վերնամատրան մէջ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան թափօր տաճարէն ներս: Թափօրապետն էր Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Յովհաննիսեան:

Կիրակի, 12 Հոկտեմբեր.- Տօն Վարագայ Ս. Խաչին: Առաւօտեան ժամը 6:30-ին հանդիսապետութեամբ Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Յովհաննիսեանի, միաբան հայրեր մեկնեցան Ս. Յարութեան տաճար: Ս. Գողգոթայի ուխտէն ետք Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան մեր վերնամատրան մէջ: Ապա Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան Սրբազան Հօր երկրորդ մուտքէն ետք, օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ մատուցեց եւ քարոզեց հանդիսապետ Սրբազան Հայրը:

Շաբաթ, 18 Հոկտեմբեր.- Սրբոց Եօթանասուն եւ երկու աշակերտացն Քրիստոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարի գաւիթը գտնուող՝ Ս. Գէորգայ Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Ներսէս Վրդ. Ալոյեան:

Կիրակի, 19 Հոկտեմբեր.- Դ. Կիրակի զկնի խաչի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Աջակողմեան դասին մէջ գտնուող Ս. Կարապետի խորանին վրայ: Պատարագեց Տ. Սերովբէ Աբղ. Անտոնեան:

Նոյն օրը կատարուեցաւ նաեւ տարեկան ուխ-

տագնացութիւն դէպի Ռամլէի Ս. Գէորգայ վանք: Ժամարարն էր Տ. Գէորգ Վրդ. Հայրապետեան:

Ուրբաթ, 24 Հոկտեմբեր.- Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Շաբաթ, 25 Հոկտեմբեր.- Ս. Թարգմանչաց Վարդապետացն մերոց՝ Մեսրոպայ, Եղիշէի, Մովսիսի Քերթովին, Դաւթի Անյաղթ Փիլիսոփային, Գրիգորի Նարեկացւոյն եւ Ներսիսի Կլայեցւոյն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ՝ Աւագ Սեղանին վրայ: Պատարագեց եւ քարոզեց Սր. Թարգմանչաց վարժարանի տեսուչ՝ Տ. Սերովբէ Աբղ. Անտոնեան:

Յաւարտ Ս. Պատարագի Լուսարարապետ Ս. Հայրը նախագահեց Կիւլպէնկեան գերդաստանի ննջեցեալներուն համար կատարուած Հոգեհանգստեան կարգին:

Կիրակի, 26 Հոկտեմբեր.- Ե. Կիրակի զկնի խաչի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն՝ մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեան: Ժամարարն էր Տ. Սուրէն Քհնյ. Ղազարեան:

Յաւարտ Ս. Պատարագի, նախագահութեամբ հանդիսապետ Սրբազան Հօր, կատարուեցաւ հոգեհանգստեան կարգ 1999-ի Հոկտեմբեր 27-ին ՀՀ ԱԺ-ի վրայ զինուած յարձակման հետեւանքով զոհուածներու հոգիներու հանգստութեան համար:

Շաբաթ, 1 Նոյեմբեր.- Ս. Աւետարանչացն՝ Մատթէոսի, Մարկոսի, Դուկասու եւ Յովհաննու: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութիւն՝ մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Յովհաննիսեան: Ժամարարն էր Տ. Վազգէն Վրդ. Ալէքեան:

Կիրակի, 2 Նոյեմբեր.- Զ. Կիրակի զկնի խաչի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր տաճարի Զախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնի խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Յովհաննիսեան:

Երկուշաբթի, 3 Նոյեմբեր.- Սուրբ Յովսէփայ Աստուածահօրն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ տաճարին մէջ՝ Հայր Յովսէփի գերեզմանին վրայ: Հանդիսապետն էր Տ. Վազգէն Վրդ. Ալէքեան: Պատարագեց Տ. Տիգրան Քհնյ Ոսկանեան:

Շաբաթ, 8 Նոյեմբեր.- Ս. Երկոտասան Վարդապետացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Աղան Վրդ. Գողգեան:

Կէսօրէ ետք, Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան տաճար, ուր ժամերգութիւնն ու նախատօնակը պաշտուեցան Հայոց Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Ապա Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան թափօրին հանդիսապետեց Տ. Աղան Վրդ. Գոգչեան:

Կիրակի, 9 Նոյեմբեր.– Է. Կիրակի գկնի խաչի: Գիւտ Ս. խաչի: Առաւօտեան ժամը 5:30-ին, հանդիսապետութեամբ Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեանի միաբան հայրեր մեկնեցան Ս. Յարութեան տաճար: Ս. Գոգչոթայի ուխտէն ետք, Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ:

Երկրորդ մուտքը կատարուեցաւ հանդիսապետութեամբ Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեանի, ապա Հայոց Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ պատարագեց եւ քարոզեց Տ. Գէորգ Վրդ. Հայրապետեան: Յետ Սուրբ եւ Անմահ Պատարագի կատարուեցաւ մեծահանդէս թափօր՝ նախ Գիւտ խաչի Այրը, ապա Ս. Գերեզմանին շուրջ եռագարձ թափօրով եւ մէկ անգամ Պատանատեղւոյն: Թափօրը գլխաւորեց Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեան, ամպհոյսի տակ եւ Կենաց Փայտի մասունքն ի ձեռին:

«խաչի քո Քրիստոս» շարականի երգեցողութենէն եւ խնկարկութենէն ետք, արարողութիւնները վերջացան Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Այսպէս փակելով 2025 տարւան Ս. Յարութեան Տաճարի հանդիսութեանց շրջանը:

Շաբաթ, 15 Նոյեմբեր.– Ամենայն Սրբոց՝ հրնոց եւ նորոց, յայտից եւ անյայտից: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Խաղ Մ. Վրդ. Զոնտուրեան:

Կիրակի, 16 Նոյեմբեր.– Ը. Կիրակի գկնի խաչի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Աջակողմեան դասին մէջ գտնուող Ս. Կարապետի խորանին վրայ: Պատարագեց Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթճեան:

Ուրբաթ, 21 Նոյեմբեր.– Նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց նախագահեց Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 22 Նոյեմբեր.– Ս. Հրեշտակապետացըն Գաբրիէլի եւ Միքայէլի: Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Պատարագեց եւ քարոզեց Ս. Հրեշտակապետաց Վանքի տեսուչ՝ Տ. Ղեւոնդ Մ. Վրդ. Յովհաննիսեան:

Յաւարտ Ս. Պատարագի Լուսարարապետ Ս. Հայրը նախագահեց Աղանի Ճէվահիրճեանի եւ զաւակացն՝ Գրիգոր եւ Սիմէոն Մարգարեան եղբարց համար կատարուած Հոգեհանգստեան կարգին:

Կիրակի, 23 Նոյեմբեր.– Թ. Կիրակի գկնի խաչի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Պատարագեց Տ. Ներսէհ Վրդ. Ալոյեան:

Շաբաթ, 29 Նոյեմբեր.– Ս. Առաքելոցն՝ Անդրէի եւ Փիլիպպոսի: Հանդիսապետութեամբ Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեանի կատարուեցաւ ուխտագնացութիւն դէպի հայոց Փիլիպպոսի աղբիւր:

Կիրակի, 30 Նոյեմբեր.– Ժ. Կիրակի գկնի խաչի: Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամաստան մէջ: Հանդիսապետն էր Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան: Պատարագեց Տ. Արշակ Արք. Ղազարեան:

Չորեքշաբթի, 3 Դեկտեմբեր.– Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Հինգշաբթի, 5 Դեկտեմբեր.– Ընծայումն Ս. Աստուածածնի: Առաւօտուն Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեանի հանդիսապետութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժերով մեկնեցան Գեթսեմանի պարտէզ եւ «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուն հանդիսաւոր Ս. Պատարագը մատուց եւ քարոզեց հանդիսապետ՝ Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան:

Յաւարտ Ս. Պատարագի, հանդիսապետութեամբ Տ. Վանիկ Մ. Վրդ. Մանկասարեանի, կատարուեցաւ Հոգեհանգստեան պաշտօն վասն հոգւոցն Կիւլլապի Կիւլպէնկեանի եւ համայն ննջեցելոց Կիւլպէնկեան գերդաստանի:

Շաբաթ, 6 Դեկտեմբեր.– Ս. Գրիգորի Սքանչելագործին, Նիկողայոսի Հայրապետին եւ Միւռոնայ Եպիսկոպոսին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Սերովբէ Արք. Անտոնեան:

Կիրակի, 7 Դեկտեմբեր.– Ա. Կիրակի Յիսնակի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ՝ Զախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնի խորանին վրայ: Պատարագեց Տ. Աղան Վրդ. Գոգչեան:

Յաւարտ Սուրբ Պատարագի՝ հանդիսապետութեամբ Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեանի, կատարուեցաւ Հոգեհանգստեան Կարգ՝ ի յիշատակ 1988 թ. Դեկտեմբեր 7-ին Հայաստանի

Սպիտակ քաղաքին մէջ տեղի ունեցած աղէտալի երկրաշարժի զոհերուն:

Ուրբաթ, 12 Դեկտեմբեր.– Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան:

Շաբաթ, 13 Դեկտեմբեր.– Սրբոց Առաքելոց եւ առաջին Լուսաւորչացն մերոց՝ Թադէոսի եւ Բարթողիմէոսի: Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գըլխադիր: Ժամարարն էր Տ. Սիոն Աբղ. Թաքուշեան:

Կիրակի, 14 Դեկտեմբեր.– Բ. Կիրակի Յիսնակի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն՝ մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեան: Ժամարարն էր Տ. Գէորգ Վրդ. Հայրապետեան:

Շաբաթ, 20 Դեկտեմբեր.– Ս. Նիկողայոսի Աքանչեւագործին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Ս. Մակարայ մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Խաղ. Մ. Վրդ. Զոննտուրեան: Վերաբերումը կատարուեցաւ գաւթին մէջ գտնուող Ս. Նիկողայոսի Սեղանին վրայէն:

Կիրակի, 21 Դեկտեմբեր.– Գ. Կիրակի Յիսնակի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Աջակողմեան դասին մէջ գտնուող Ս. Կարապետի խորանին վրայ: Պատարագեց Տ. Ներսէս Վրդ. Ալոյեան:

Նոյն օրը երեկոյեան, նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Երկուշաբթի, 22 Դեկտեմբեր.– Յղութիւն Ս. Աստուածածնի ի յԱննայէ: Առաւօտուն Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեան Սրբազան Հօր հանդիսապետութեամբ Միաբան Հայրեր ինքնաշարժերով մեկնեցան Գեթսեմանի պարտէզ եւ «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ տաճար, ուր օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ մատուց եւ քարոզեց հանդիսապետ Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեան:

Ուրբաթ, 26 Դեկտեմբեր.– Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Շաբաթ, 27 Դեկտեմբեր.– Ս. Յակոբայ Մըծբընայ Հայրապետին, Մարուգէի Ճգնաւորին եւ Մելիտոսի Եպիսկոպոսին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան:

Կիրակի, 28 Դեկտեմբեր.– Դ. Կիրակի Յիսնակի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն՝ մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան: Ժամարարն էր Տ. Արշակ Աբղ. Ղազարեան:

Պատրաստեց՝ ՏԻՐԱՅՈՒ ԱՌՆՕ ՄԽԻԹԱՐԵԱՆ

